ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2647 - Ա **14 ապրիլի 2009թ.**

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի Հ. 841-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 12 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼԻԴԻԱ ԳՐԻԳՈՐԻ ՄԿՈՅԱՆԻ, ՆԵՐՍԵՍ ՄԱՄԻԿՈՆԻ ԱՆԵՍՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Լիդիա Գրիգորի Մկոյանի (ծնված 17.05.1940թ.), Ներսես Մամիկոնի Անեսյանի (ծնված 23.10.1961թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Համո Սահյան փողոցի հ.12 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 371.79քմ, որից 300քմ մակերեսով հողամասը Լիդիա Գրիգորի Մկոյանին, Ներսես Մամիկոնի Անեսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 71.79քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով, իսկ 47քմ մակերեսով հողամասը չի կարող տրամադրվել, քանի որ գտնվում է կառուցապատման գծից դուրս:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1957 թվականը, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիր տարածքային ստորաբաժանման 05.02.2009թ. հ.411ա, Երևանի քաղաքապետարանի <<Հողի ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 23.03.2009թ. հ.20/2-Ե/147 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 13.03.2009թ. հ.20-Ել-1740 եզրակացությունը, համաձայն որի Համո Սահյան փողոցի հ.12 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Չեղյալ ճանաչել Երևանի քաղաքապետի 2005 թվականի ապրիլի 21-ի հ.841-Ա որոշումը:

2. Վերականգնել Համո Սահյան փողոցի հ.12 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Լիդիա Գրիգորի Մկոյանի, Ներսես Մամիկոնի Անեսյանի հողօգտագործման

իրավունքը բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ օրինական 300քմ մակերեսով հողամասին կից 71.79քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 71.79քմ մակերեսով հողամասի նկատմամբ։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Կովկասյան փողոցի հ.12 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Համո Սահյան փողոցի հ.12 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Արաբկիր տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Լիդիա Գրիգորի Մկոյանի, Ներսես Մամիկոնի Անեսյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Արաբկիր թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ